3) մինչև 2020 թվականի ավարտն ապահովել ՀՀ տարածքում յուրաքանչյուր ծննդյան և մահվան ակտային գրանցումը՝ անկախ պետական գրանցման համար նախատեսված դիմում ներկայացնելու հանգամանքից.

4) մինչև 2019 թվականի ավարտն իրականացնել երեխայի միջազգային առևանգման և օտարերկրյա որդեգրումների բնագավառի բարեփոխումներ՝ օրենսդրական մակարդակով ամրագրելով բոլոր ընթացակարգերը.

5) մինչև 2022 թվականի ավարտը թվայնացնել քաղաքացիական կացության ակտերի թղթային արխիվը:

11. Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտն իրականացնել իրավաբանական անձանց պետական գրանցման գործընթացն ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով՝ բոլոր գրանցումների համար առցանց դիմելու հնարավորությամբ.

2) մինչև 2019 թվականի ավարտն արդիականացնել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային www.azdarar.am կայքը, ներդնել հայտարարությունների տրամադրման առցանց էլեկտրոնային համակարգ.

3) մինչև 2020 թվականի ավարտը հիմնել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության հենքի վրա Բիզնես ռեգիստրի գործակալություն և մշակել ու ներդնել միասնական էլեկտրոնային բիզնես ռեգիստրի համակարգ.

4) մինչև 2021 թվականի ավարտը թվայնացնել իրավաբանական անձանց արխիվային փաստաթղթերը, ստեղծել էլեկտրոնային արխիվ.

5) մինչև 2022 թվականի ավարտը պարզեցնել և զարգացնել ապահովված իրավունքների գրանցման համակարգը:

12. Էլեկտրոնային արդարադատության ոլորտում ՀՀ կառավարությունը նախատեսում է՝

1) մինչև 2018 թվականի ավարտը լիարժեք գործարկել էլեկտրոնային նոտար՝ www.e-notary.am և ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի www.e-register.am էլեկտրոնային համակարգերը: Հնարավորություն ստեղծել էլեկտրոնային ռեգիստրի բոլոր գործառույթներն էլեկտրոնային եղանակով իրականացնելու համար.

2) մինչև 2019 թվականի ավարտը զարգացնել նորմատիվ իրավական ակտերի հրապարակման համակարգը՝ գործարկելով պաշտոնական էլեկտրոնային տեղեկագիրը.